



SEF INTERNATIONAL

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնը: ՎԱՐԿԱՅԻՆ ՄԱՄՆԱԳԵՏ

Աշխատանքի վայրը: Ք. Գորիս

Աշխատանքի նկարագիր

Կազմակերպության վարկավորման ծառայությունների ապահովում, սեփական պորտֆելի արդյունավետ կառավարում և նախանշված ծավալների ապահովում:

Վարկային մասնագետի հիմնական աշխատանքային պարտականություններն են

- Կազմակերպության կողմից առաջարկվող վարկատեսակների վերաբերյալ պոտենցիալ հաճախորդների տեղեկացվածության ապահովումը
- Հաճախորդների արհեստավարժ սպասարկումը
- Հաճախորդի վարկային պահանջի և փաստաթղթերի վերլուծությունը և ինֆորմացիոն համակարգ ներմուծումը
- Վարկառուի ետվճարումների ապահովումը համաձայն պայմանագրի
- Վարկային ռիսկերի վերլուծություն և գնահատում
- Շուկայի ուսումնասիրություն բիզնես և/կամ գյուղատնտեսական վարկերի գծով
- Խնդիրների բացահայտում և լուծումների առաջարկում

Պահանջվող մասնագիտական գիտելիքները և աշխատանքային փորձը

- Բարձրագույն կրթությունը տնտեսագիտության կամ ճշգրիտ գիտությունների բնագավառում
- Վերլուծական կարողություններ
- MS Office ծրագրային փաթեթի իմացություն (Word, Excel)
- AS Bank համակարգի իմացությունը առավելություն է
- Արդյունավետ բանակցելու և հաղորդակցվելու հմտություն
- Թիմային աշխատելաոճ
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացությունը ցանկալի է

Այլ աշխատանքային պայմաններ

Աշխատանքն իրականացվում է գրասենյակային պայմաններում՝ հաճախակի այցելություններով հաճախորդներին:

Դիմելու կարգը

Ցանկացողները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները cv@sef.am էլեկտրոնային հասցեին կամ ֆաքսի միջոցով՝ (374 10) 20 28 21 հեռախոսահամարին:

Խնդրում ենք նամակում նշել՝ ինչ պաշտոնի համար եք դիմում:

Ինքնակենսագրությունների ընդունման վերջնաժամկետն է **10 հուլիսի 2015թ.**: